ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 296. Գրավոր գործարք

1. Գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել սույն օրենսգրքի 450 հոդվածի ~~3-րդ և 4-րդ~~ 3-ից 4-րդ կետերով նախատեսված եղանակներով:

2. Օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ: Եթե նման հետևանքներ նախատեսված չեն, ապա կիրառվում են գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքները (298 հոդվածի 1-ին կետ):

3. Գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

4. Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել:

(296-րդ հոդ. փոփ. 24.10.18 ՀՕ-398-Ն օրենք)

~~Հոդված 443. Պայմանագրի օրինակելի պայմանները~~

Հոդված 443. Պայմանագրի ընդհանուր պայմանները

1. Պայմանագրում կարող է նախատեսվել, որ դրա առանձին պայմանները որոշվում են համապատասխան տեսակի պայմանագրերի կամ տվյալ պայմանագրի համար մշակված և կողմերին հասանելի եղանակով, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակներում հրապարակված կամ կողմերին այլ կերպ հասանելի դարձած ընդհանուր պայմաններով:

2. Պայմանագրի ընդհանուր պայմանները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը և կիրառվում կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների նկատմամբ, եթե պայմանագիրը կնքելիս ապահովվում է այն կնքող անձի կողմից դրա ընդհանուր պայմաններին մատչելի եղանակով և ամբողջապես ծանոթանալու և դրանց կապակցությամբ համաձայնություն տալու հնարավորությունը:

3. Էլեկտրոնային եղանակով պայմանագրի կնքման դեպքում, ի լրումն սույն հոդվածի 2-

դդ մասով սահմանված պայմանների, պետք է ապահովվի պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրի ընդհանուր պայմաններին համաձայնություն տալը՝ դրան ուղղված հստակ գործողություն իրականացնելով:

4. Այն դեպքերում, երբ պայմանագրում առկա չէ հղում դրա ընդհանուր պայմաններին, ապա նման պայմանները ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են որպես գործարար շրջանառության սովորույթներ, եթե դրանք համապատասխանում են սույն օրենսգրքի 7-րդ հոդվածի և 437-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներին:

5. Սույն հոդվածով սահմանված կանոնները կիրառվում են պայմանագրի առանձին տեսակների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ սույն օրենսգրքի կանոններով:

6. Օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել պայմանագրի ընդհանուր պայմանների վավերականության ավելի խիստ պահանջներ:

~~1. Պայմանագրում կարող է նախատեսվել, որ դրա առանձին պայմանները որոշվում են համապատասխան տեսակի պայմանագրերի համար մշակված և մամուլում հրապարակված օրինակելի պայմաններով:~~

~~2. Այն դեպքերում, երբ պայմանագրում հղում չկա օրինակելի պայմաններին, նման օրինակելի պայմանները կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են որպես գործարար շրջանառության սովորույթներ, եթե դրանք համապատասխանում են սույն օրենսգրքի 7 հոդվածի և 437 հոդվածի 6-րդ կետով սահմանված պահանջներին:~~

~~3. Օրինակելի պայմանները կարող են շարադրվել օրինակելի պայմանագրի կամ այդ պայմանները պարունակող այլ փաստաթղթի ձևով:~~

Հոդված 444. Միանալու պայմանագիր

1. Միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է ~~բանաձևային կամ այլ~~ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով: Պայմանագիրը համարվում է միանալու նաև այն դեպքում, երբ պայմանագրին միացող կողմը թեկուզև մասնակցել է պայմանագրի որևէ պայմանի որոշմանը, սակայն պայմանագրի կամ դրա որևէ պայմանի բովանդակությունից կամ էությունից բխում է, որ պայմանագիրը սահմանվել է ստանդարտ ձևերով, և որոշված պայմանը չի փոխում պայմանագրի էությունը:

2. Պայմանագրին միացած կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը թեկուզև չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, սակայն այդ կողմին զրկում է նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն

գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված հանգամանքների առկայության դեպքում պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու մասին պայմանագրին միացած կողմի ներկայացրած պահանջը, կապված նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, ենթակա չէ բավարարման, եթե միացած կողմը գիտեր կամ պետք է իմանար, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը:

Հոդված 447. Պայմանագրի մեկնաբանումը

1. Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

3. Օրենքով կարող են նախատեսվել սպառողների հետ կնքվող պայմանագրերի մեկնաբանման այլ կանոններ:

Հոդված 450. Պայմանագրի ձևը

1. Պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ:

2. Եթե կողմերը պայմանավորվել են պայմանագիրը կնքել որոշակի ձևով, ապա այն կնքված է համարվում դրան պայմանավորված ձև տալուց հետո, թեկուզև պայմանագրի տվյալ տեսակի համար այդ ձևը օրենքով չի պահանջվում:

3. Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել՝

1) կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով.

2) փոստային եղանակով փաստաթուղթ փոխանակելու միջոցով.

3) էլեկտրոնային եղանակով:».

~~3. Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի~~

~~կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս, եթե օրենքով նման պայմանագրի ձևի վերաբերյալ այլ պահանջ սահմանված չէ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:~~

3.1. Պայմանագիրը էլեկտրոնային եղանակով կարող է կնքվել էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով էլեկտրոնային հաղորդագրություն, փաստաթուղթ կամ տվյալ փոխանակելու միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայք, էլեկտրոնային հավելված կամ համանման այլ միջոցներ) էլեկտրոնային տվյալների փոխանակման միջոցով՝ պայմանագրի կնքմանն ուղղված հստակ գործողություն իրականացնելով:

3.2. Էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելիս պետք է՝

1) հնարավոր լինի հաստատել փոխանակվող էլեկտրոնային հաղորդագրության, փաստաթղթի կամ տվյալի իսկությունը և օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի միջև համաձայնեցված կարգով պատշաճ կերպով ապահովվի պայմանագիր կնքող անձի նույնականացումը (հնարավոր լինի ճշգրիտ որոշելու, որ էլեկտրոնային հաղորդագրությունը, փաստաթուղթը կամ տվյալը ելնում է պայմանագրի կողմից և արտահայտում է վերջինիս կամքը), և

2) ապահովվի պայմանագիրը կնքող անձի կողմից տվյալ պայմանագիրը (ներառյալ՝ դրա ընդհանուր պայմանները (հոդված 443)) պահպանելու և անփոփոխ կերպով վերարտադրելու հնարավորությունը:

3.3. Էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելիս, եթե օրենքով նման պայմանագրի ձևի վերաբերյալ այլ պահանջ սահմանված չէ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը:

4. Պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է սույն օրենսգրքի 454 հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

(450-րդ հոդ. փոփ. 17.06.16 ՀՕ-115-Ն օրենք)

Հոդված 451. Օֆերտա

1. Օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ:

Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

2. Օֆերտան կաշկանդում է ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից:

Եթե օֆերտայի հետկանչի մասին ծանուցումն ստացվել է օֆերտան ստանալուց առաջ կամ դրա հետ միաժամանակ, ապա օֆերտան համարվում է չուղարկված:

~~Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս օֆերտան համարվում է ստացված այն պահից, երբ այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ հայտնաբերել է հասցեատերը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին:~~

3. Եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելիս օֆերտան համարվում է ստացված այն պահից, երբ՝

1) այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ կամ նրա կողմից կիրառվող կամ շահագործվող էլեկտրոնային հարթակ, կամ

2) այն հայտնաբերել է հասցեատերը, եթե օֆերտան ուղարկվել է հասցեատիրոջ կողմից չնշված տեղեկատվական համակարգին:

(451-րդ հոդ. փոփ. 17.06.16 ՀՕ-115-Ն օրենք)

Հոդված 452. Օֆերտայի անհետկանչելիությունը

1. Հասցեատիրոջ ստացած օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտի համար օֆերտայում սահմանված ժամկետում, եթե այլ վերապահում չկա օֆերտայում, կամ չի բխում առաջարկի էությունից կամ այն իրավիճակից, որում այն արվել է:

2. Էլեկտրոնային ~~հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով~~ եղանակով պայմանագիր կնքելիս օֆերենտն ու ակցեպտանտն ունեն օֆերտայում կամ ակցեպտում իրենց վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ճշտման իրավունք, պայմանով, որ այն իրականացվի վրիպակի, գրասխալի կամ թվաբանական սխալի հայտնաբերման պահից անհապաղ, և մյուս կողմը չի ձեռնարկել պայմանագրի կատարմանն ուղղված գործողություն (ապրանքներ բեռնել, աշխատանքներ կատարել, ծառայություններ մատուցել, վճարում կատարել և այլն), որը հանգեցրել է ծախսերի:

(452-րդ հոդ. փոփ. 17.06.16 ՀՕ-115-Ն օրենք)

Հոդված 454. Ակցեպտ

1. Ակցեպտն առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխանն է, ում հասցեագրվել է օֆերտան:

Ակցեպտը պետք է լինի լրիվ և անվերապահ:

2. Լռությունն ակցեպտ չէ, եթե այլ բան չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթից կամ կողմերի նախկին գործարար հարաբերություններից:

3. Օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

~~4. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ օֆերտայում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումը մուտք է գործում օֆերտա ուղարկած անձի կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ այն հայտնաբերել է օֆերտա ուղարկած անձը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին:~~

4. Եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ այլ բան

նախատեսված չէ, ապա էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելիս ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ՝

1) այն մուտք է գործում հասցեատիրոջ կողմից նշված տեղեկատվական համակարգ կամ նրա կողմից կիրառվող կամ շահագործվող էլեկտրոնային հարթակ, կամ

2) այն հայտնաբերել է օֆերտա ուղարկած անձը, եթե ակցեպտը ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին:

(454-րդ հոդ. փոփ. 17.06.16 ՀՕ-115-Ն օրենք)

Հոդված 468. Պայմանագիրը փոփոխելու և լուծելու կարգը

1. Պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

1.1. Պայմանագրի ընդհանուր պայմանները (հոդված 443) միակողմանի կարելի է փոփոխել, եթե այդպիսի փոփոխման հնարավորությունը նախատեսված է կողմերի միջև կնքված, պայմանագրի ընդհանուր պայմաններին հղում պարունակող պայմանագրում կամ օրենքով:

1.2. Պայմանագրի ընդհանուր պայմանները (հոդված 443) միակողմանի փոփոխելու դեպքում, դրանք փոփոխող կողմը փոփոխության վերաբերյալ մյուս կողմին տեղեկացնում է կողմերի միջև համաձայնեցված այնպիսի եղանակով, որն ապահովում է կատարված փոփոխություններին մատչելի եղանակով և ամբողջապես ծանոթանալու, դրանք պահպանելու և անփոփոխ կերպով վերարտադրելու հնարավորությունները: Փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է մինչև փոփոխությունն ուժի մեջ մտնելը՝ ողջամիտ ժամկետում, եթե պայմանագրով, օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

2. Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

Հոդված 562. Անշարժ գույքի վաճառքի պայմանագրի ձևը

1. Անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ ~~450 հոդվածի 3-րդ կետ~~):

2. Անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 572. Ռենտայի պայմանագրի ձևը

1. Ռենտայի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ ~~450 հոդվածի 3-րդ կետ~~):

2. Ռենտայի դիմաց անշարժ գույքի օտարում նախատեսող ռենտայի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 654. Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրի ձևը

1. Շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ ~~450 հոդվածի 3-րդ կետ~~):

2. Շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 662. Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի ձևը

1. Բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ ~~450 հոդվածի 3-րդ կետ~~):

2. Բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 682. Լիզինգի պայմանագրի ձևը

1. Լիզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ սույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-ից 3.3-րդ մասերով ~~3-րդ մասով~~ սահմանված կարգով:

2. Անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 686. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի ձևը

1. Գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ ~~450 հոդվածի 3-րդ կետ~~):

2. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման: